



**Մաթեմատիկա
5-րդ դասարան
2016 – 2017**

*Անհնար է հզոր պետականություն առանց հզոր մաթեմատիկայի՝
Նապոլեոն Բոնապարտ*

- Գտնել օրինաչափությունը և լրացնել բաց թողնված թվերը. /4 միավոր/
ա) 1, 4, 10, ?, 46, ?
բ) 4, 7, 6, 11, 8, 15, ?, ?, ?
- Հայր ու որդի միասին 39 տարեկան են: 18 տարի հետո հայրը որդուց 2 անգամ մեծ կլինի: Քանի՞ տարեկան էր հայրը 5 տարի առաջ: /3 միավոր/
- Անբարեխիղճ աշակերտը գրքի տարբեր տեղերից պոկեց 10 թերթ և պոկած էջերի համարները գումարեց իրար: Արդյունքում ստացավ 217: Հնարավո՞ր է այդպիսի արդյունք: Պատասխանը հիմնավորել: /4 միավոր/
- ABCD ուղղանկյան պարագիծը 14 սմ է, CEFD ուղղանկյան պարագիծը՝ 22 սմ, իսկ ABEF ուղղանկյան պարագիծը՝ 26 սմ: Գտնել EF հատվածի երկարությունը: /3 միավոր/



5. Աստղանիշերի փոխարեն այնպիսի թվանշաններ տեղադրիր, որ գործողությունը ճիշտ լինի:
 /3 միավոր/

				2	*	9			
			x						
					*	*			
				*	5	*			
	+								
		*	*	*	*				
		*	*	*	0	6			

6. 8 հատ քարտ, որոնց վրա գրված են թվեր, դասավորված են 2 սյունակով այնպես, ինչպես ցույց է տրված ներքոնշյալ աղյուսակում: Հնարավոր է արդյոք, միայն երկու քարտերի տեղերը փոխել այնպես, որ սյունակներում եղած թվերի գումարները լինեն հավասար: /3 միավոր/

3	9
4	2
5	7
8	1

ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՀԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ

Անուն, ազգանուն, հայրանուն _____

Դպրոց _____

Դասարան _____